ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.03.2016թ.
271-ի 5

“Գազպրոմ Արմենիա” ՓԲԸ-ի
վարչության նախագահ-գլխավոր տնօրեն
պարոն Վարդան Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Մեզ են դիմել Ծարավ Աղբյուր 55/5 շենքի բնակիչները եւ խնդրել են իրենց օգնել տեղեկություններ ստանալու հարցում: Ծարավ Աղբյուր փողոցի հարակից տարածքում՝ Ծարավ Աղբյուր 55/5 և 55/6 շենքերի հարեւանությամբ “Գազպրոմ Արմենիա” ՓԲԸ-ի կողմից իրականացվում է շինարարություն: Շինարարության արդյունքում, ինչպես նաեւ շինարարական տեխնիկայի երթեւեկության հետեւանքով Ծարավ Աղբյուր փողոցն աղտոտված է շինարարական աղբով եւ չի մաքրվում: “Մթնոլորտային օդի պահպանության մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ “Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները եւ քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝… բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ. գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով….”: Մեզ դիմած քաղաքացիները հայտնել են, որ “Մթնոլորտային օդի պահպանության մասին” ՀՀ օրենքի վերոնշյալ պահանջները շինարարության ընթացքում չեն պահպանվում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Վերահսկու՞մ է արդյոք “Գազպրոմ Արմենիա” ՓԲԸ-ի ղեկավարությունը իրականացվող շինարարության արդյունքում ճանապարհներին առաջացող աղբի հեռացման գործընթացը,
2. Եթե այո, ապա ինչու՞ շինարարության ընթացքում չեն պահպանվում “Մթնոլորտային օդի պահպանության մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները,
3. Խնդրում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Ծարավ Աղբյուր 55/5 և 55/6 շենքերի հարեւանությամբ “Գազպրոմ Արմենիա” ՓԲԸ-ի կողմից իրականացվող շինարարության հետեւանքով առաջացող աղտոտվածությունը վերացնելու եւ շինարարության հետեւանքով փողոցի հետագա աղտոտումը կանխելու եւ օրենքի պահանջների պահպանմամբ շինարարություն իրականացնելու ուղղությամբ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյան